«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ N 96

«13» 12 2024թ. ք.Գորիս

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Ղեկավարվելով «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Գորիս պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման համակարգի արդյունավետության գնահատման ընթացակարգը:

Նախագահ՝ ԱՐԱՐԱՏ ԼԱԼԱԲԵԿՅԱՆ _____

(ստորագրություն)

Քարտուղար՝ ԴԱՎԻԹ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ _____

(ստորագրություն)

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ՏՆՕՐԵՆ

ՀՐԱՄԱՆ N 205 Լ

«27» 12 2024թ. գ. Գորիս

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.Հաստատել «Գորիս պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման համակարգի արդյունավետության գնահատման ընթացակարգը:

2.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՏՆՕՐԵՆ՝ ԿԱՐԵՆ ԼԱԶԱՐՅԱՆ _____

(ստորագրություն)

Հաստատված է

«Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի

2024 թ. «դեկտեմբերի» «27» N205-լ հրամանով

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՀՀ-ում միջին մասնագիտական կրթության զարգացման գործընթացներն ու հեռանկարները անհրաժեշտ է դիտարկել երկրի զարգացման, տնտեսական կայունության ու մրցունակության ապահովման համատեքստում:

Մասնագիտական կրթության քաղաքականության, քոլեջի կանոնադրական գործառույթների ու ռազմավարական զարգացման ծրագրի արդյունավետ իրականացումը պետք է նպատակաուղղված լինի՝

- Որակյալ և մրցունակ մասնագետների պատրաստմանն ու մասնագիտական զարգացմանը,
- Աշխատաշուկայի կարիքների բավարարմանն ու հասարակության կայուն զարգացմանը,
- Մասնագետների և մանկավարժական կադրերի գործառութային գրագիտության, կրթական, հասարակական, հետազոտական, նորարարական և ստեղծագործական գործունեության խթանմանն ու արդյունավետության բարձրացմանը,
- Ազգային ու միջազգային մակարդակներում միջին մասնագիտական կրթական համակարգերի մրցունակության շարունակական ապահովմանը,
- Քոլեջի ինքնավարության (ակադեմիական, վարչարարության, կառավարման և ֆինանսական) ընդլայնմանը,
- Քոլեջի ֆինանսական կայունության ապահովման կառուցակարգերի մշակմանն ու գործառմանը,
- Երկրի մրցունակության բարձրացմանը, գիտելիքահենք տնտեսության զարգացմանն ու կայունության ապահովմանը,
- Քաղաքացիական հասարակության ձևավորմանն ու շարունակական զարգացմանը,
- Ազգային ինքնության (հայապահպանության) պահպանմանն ու զարգացմանը:

Գորիսի պետական քոլեջում կառավարումն իրականացվում է համալիր ձևով, որի արդյունավետության բարձրացմանն են ուղղված քոլեջի ստորաբաժանումների աշխատանքները:

Քոլեջի կառավարման համակարգի բարեփոխումների գործընթացի հիմնական ուղղություններն են՝

- Վարչարարությունը,

- Ուսումնական գործընթացը,
- Ուսանողների ընդունելությունը,
- Որակի ներքին ապահովման համակարգը,
- Ֆինանսների կառավարումը,
- Նյութատեխնիկական բազայի արդիականացումը,
- Ստորաբաժանումների աշխատանքների գնահատումն ու բարելավումը:

Քոլեջի ինքնավարությունը ակադեմիական (կրթական, հետազոտական), կազմակերպական, գործառնական, ինչպես նաև մարդկային, գույքային, նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսների կառավարման գործընթացների վերաբերյալ քոլեջի ներքին որոշումների կայացման և հանձնարարականների ամբողջությունն է:

Քոլեջը, լինելով ինքնավար, ամբողջովին կրում է իր կատարողականի արդյունավետության և որակի ապահովման պատասխանատվությունը:

Քոլեջի արդյունավետ ռազմավարական կառավարումը անմիջականորեն կապված է իր ինքնավարության հետ, որի ապահովման արդյունքում կարող է զգալիորեն բարելավել ինստիտուցիոնալ կարողություններն ու խթանել միջին մասնագիտական կրթության ոլորտի զարգացումն ու կրթական բարեփոխումների իրականացումը:

Արդյունավետության գնահատման մեխանիզմերն ու գործիքները

Քոլեջում կառավարման համակարգի արդյունավետության գնահատման համար կիրառվում են մի շարք մեխանիզմներ՝

- Ստորաբաժանումների տարեկան կատարողականների նոր ձևաչափ,
- Կատարողականների վերլուծությունների հիման վրա բարելավման միջոցառումներ,
- Քոլեջի գործունեության տարեկան կատարողական զեկույց,
- ՈԱ պատասխանատուի կողմից կազմակերպվող հարցաթերթիկային հարցումները,
- Կառավարման և խորհրդակցական մարմինների որոշումները,
- Դիմորդների հավաքագրման և թվաքանակի ավելացման միջոցառումները,
- Ֆինանսական ռեսուրսների կայունությունը:

Քոլեջում կառավարման համակարգի արդյունավետության գնահատման համար կիրառվում են հետևյալ գործիքները՝

- Ներքին և արտաքին շահակիցների հետ հանդիպում-քննարկումները,
- Ներքին և արտաքին շահակիցների համար մշակված հարցաթերթիկները,
- ՈԱ պատասխանատուի կողմից անհրաժեշտ խորհրդատվությունները,
- Խմբային քննարկումները,
- Մանկավարժական խորհրդի նիստերը,
- Շրջանավարտների արձագանքները,
- Ինստիտուցիոնալ ինքնավերլուծությունը,
- Արտաքին գնահատումը: